ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Խոսքի մշ.՝ Հովհ. Թումանյանի

Կոմիտաս



1. Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:

Կրկներգ. – Սիրունիկ, սիրունիկ,
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

2. Քո բուն հյուսած ծաղիկներով
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լըցված ցող ու շաղով,
Քընես-կելնես երգ ու տաղով:

Կրկներգ.— Սիրունիկ...

3. Քո թև փափուկ ու խուտուտիկ,
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր - կարմիր տոտիկներով
Կըշորորաս ճուտիկներով:

Կրկներգ.— Սիրունիկ...

4. Երբ կըկանգնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,
Սարեր - ձորեր զվարթ կանես,
Դարդի ծովեն սիրտ կըհանես:

Կրկներգ.— Սիրունիկ...

* * *